



ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
NATIONAL SUPREME COUNCIL OF THE ARMENIANS OF WESTERN ARMENIA  
НАЦИОНАЛЬНЫЙ ВЕРХОВНЫЙ СОВЕТ АРМЯН ЗАПАДНОЙ АРМЕНИИ  
المجلس الوطني الأعلى لأرمن أرمينيا الغربية

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Յարգարժան հայրենակիցներ,

Սոյն հաղորդագրութեամբ, ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի նախաձեռնող մարմինը մեծ գոհունակութեամբ կը յայտարարէ հետեւեալը.

1. ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի ընտրութիւնները կազմակերպող եւ վերահսկող ընտրական յանձնաժողովի գործունէութիւնները մէկնարկած են իր երեք բաժիններով.

- Իրաւական/Միջազգային օրէնքի
- Ազգային/Քաղաքական
- Համայնքային/Հայրենակցական

2. Իրաւական/Միջազգային օրէնքի բաժինը սկսած է ընտրական օրէնքի մշակումը, զոր կ;աւարտուի մինչեւ 30 Սեբտեմբեր 2020:

3. Ազգային/Քաղաքական բաժինը, իր 15 Օգոստոս 2020-ի Ծանուցումով սահմանեց ապագայ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ ի Ազգային եւ Քաղաքական դիրքորոշումներու հաստատ սկզբունքները: Ան ներկայիս կը ձգտի ապահովել որոշ երկիրներու ճանաչումը ընտրելիք ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ին նկատմամբ:

4. Համայնքային/Հայրենակցական բաժինը կը շարունակէ խորհրդակցութիւններու գործընթացը՝ գրաւեալ Արեւմտեան Հայաստանի, տարագրութեան մէջ, եւ Հայաստանի Հանրապետութեան տարածքին գտնուող արեւմտահայութեան համայնքներուն հետ:

5. ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի ընտրութիւններուն մասնակցութեան մասին հրաւերները կ'ուղղարկուին 01 Հոկտեմբեր 2020-էն սկսեալ:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի  
Նախաձեռնող Մարմին

21 Օգոստոս 2020